ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐՔԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

TURCOLOGICA 106, Spoken Ottoman in Mediator Texts, Edited by Éva Á. Csató, Astrid Menz and Fikret Turan, Wiesbaden, Harrssowitz Verlag, 2016, 180 p[1].

Սարգսյան Անի [2]

Օսմանագիտական հետազոտությունների առարկա հանդիսացող ոչ արաբատառ մասնավորապես հունական, հայկական, վրացական այբուբեններով տառադարձված օսմաներեն տեքստերի ուսումնասիրությունը, պայմանավորված դրանց գիտական տեղեկատվության հագեցվածությամբ, խիստ արդիական է:

Turcologica շարքի 106-րդ համարում, տպագրված 2016թ. Վիսբադենում, ներառված են հոդվածներ, որոնք այդ տեքստերի միջոցով քննարկում ու վեր են հանում խոսակցական օսմաներենի լեզվական հարցերը՝ համաժամանակյա ու տարաժամանակյա կտրվածքով, բացահայտում են պատմական, մշակութային, դավանական միջավայրերը, որտեղ ստեղծվել ու ավանդվել են այդ տեքստերը: Հոդվածանյութերը նախապես ներկայացվել են «Միջնորդներ. Ոչ արաբատառ օսմաներեն և պարսկերեն» (“The Mediators: Ottoman Turkish and Persian in Non-Arabic Scripts”) գիտաժողովին, որը կազմակերպվել էր Ստամբուլի շվեդական

[1] Եվա Կսատտոյի, Աստրիդ Մենզի և Ֆիքրեթ Թուրանի (խմբ.) Խոսակցական օսմաներենը միջնորդ (մեդիատոր) տեքստերում, 180 էջ:

[2] Բ.գ.թ., ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ ani.sargsian@ysu.am

հետազոտական և Ստամբուլի գերմանական Օրիենտ ինստիտուտների կողմից: Հոդվածանյութերը հիմնականում համապատասխանում են Ուփսալայի համալսարանում իրականացվող գիտահետազոտական ծրագրին՝ *Քաղաքային միտքը. Մշակութային և միջավայրային դինամիկան ("The Urban Mind. Cultural and Environmental Dynamics"),* որը նվիրված է «լեզվաբանական էկոլոգիային»՝ քաղաքային միջավայրում գործառված լեզվաբանական կոդերի փոխառնչակցություններին:

Ժողովածուի առաջաբանում շվեդ թուրքագետ-լեզվաբան Լ. Ջոհանսոնը գրում է, որ միջնորդ աղբյուրների միջոցով հնարավոր է վերհանել օսմաներենի խոսակցական լեզվի տարբեր շերտերը, որոնք կարևոր են թուրքերենի պատմության տեսակետից: Արաբատառ համակարգը, իհարկե ինչպես և իրավամբ նշում է Լ. Ջոհանսոնը, չէր կարող հստակ ընդգծել օսմաներենի հնչյունական ողջ կազմը, իսկ ոչ արաբատառ այբուբենը, ինչպես հայտնի է, հնարավորինս հստակ պատկերել է սինխրոնիկ խոսքը: Այստեղ չենք կարող չկարևորել մեսրոպատառ այբուբենի կատարելությունը, որին հաջողել է արտահայտել թուրքերենի բոլոր հնչյունները՝ յուրաքանչյուր հնչյունին առանձնացնելով մեկ տառ:

Առաջին հոդվածում, որը վերնագրված է **«Ստամբուլի լեզվաբանական լանդշաֆտը 17-րդ դարում» (“The linguistic landscape of Istanbul in the seventeenth century”)**[3], հոդվածագրերը՝ Ե. Կսատոն, Բ. Բրենդեմոնը, Լ. Ջոհանսոնը, Կ. Ռոմերը, Հ. Ստայնը, անդրադառնալով 1453թ. Կ. Պոլսի նվաճումից հետո

[3]Հոդվածն առաջին անգամ տպագրվել է Ուփսալայի համալսարանի հնէաբանության և հին պատմության ֆակուլտետի“The Urban Mind Cultural and Environmental Dynamics” պարբերականում (խմբագիրներ՝ Փոլ Ջ. Ջ. Սինկլեիր, Գ. Նորդքուիստ, Ֆ. Հերսչենդ և Ք. Իզենդահլ), Ուփսալա, 2010, էջ 415-439 http://uu.diva-portal.org/smash/get/diva2:384594/FULLTEXT02.pdf

ստամբուլյան լեզվական միջավայրին, քննության են ենթարկում 17-րդ դարի Ստամբուլի բնակչության լեզուն ու դրա վրա ազդեցություն ունեցող Ստամբուլի բազմաշերտ լեզվական կոդերի «էկոլոգիական համակարգը», *lingua franca-ի* նախապայմանները, օսմաներենի զարգացման նախադրյալները, արաբապարսկական տարրերի գերակայությունը: Առանձին ներկայացնում են ոչ թուրքախոս համայնքներիի ներկայացուցիչներին՝ հույներին, հայերին, հրեաներին, իտալացիներին՝ քննելով *միլլեթների* համակարգի ստեղծման պատմությունն ու ազգային փոքրամասնությունների բնակության հիմնական վայրերի վերաբերյալ տեղեկությունները: Հեղինակներն առանձնակի շեշտում են տառադարձված բնագրերի այն միջնորդ հեղինակներին, ովքեր երկարատև ապրել են թուրքախոս միջավայրում և կատարելապես տիրապետել են օսմաներենին: Այս ուղղությամբ հոդվածագրերն ընդգծում են հույների նկատմամբ հայերի՝ որպես ակտիվ լեզվական և մշակութային միջնորդների առավելությունը և անդրադառնում Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Հրեա հարսնացուն» հայատառ թուրքերենով գրված էպիկական ստեղծագործությանը, որն արդեն առանձին հոդվածով լեզվաբանական քննության է ենթարկում Լ. Ջոհանսոնն այս ժողովածուի **«Ածանցի ձայնավորացումը երկու միջին օսմաներեն տառադարձված տեքստերում»** (**“Suffix vocalism in two Middle Ottoman transcription texts”**) վերտառությամբ հոդվածում[4]: Հոդվածում համեմատական քննության ենթարկելով

[4] Հոդվածի նախնական տարբերակը տպվել է 1986թ.՝ ZumSuffixvokalismus in zweimittelosmanischen Transkriptionstexten. Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes 76, pp. 163-169, վերատպվել՝ Linguistische Beiträge zur Gesamtturkologie. Budapest: Akadémiai, 1991, pp. 77-83:

«Հրեա հարսնացու»[5]-ի և Գ. Հազաիի կողմից խմբագրված Հարսանյիի 1672թ. գրված “Colloquia”-ի բնագրերում առկա ածանցների ձայնավոր հնչյունների ներդաշնակության երևույթները՝ հոդվածագիրը հանգամանալից վերլուծության է ենթարկում օսմաներենի վերջածանցների ձայնավորեցման սկզբունքներն ու դրանց առանձնահատկությունները :

«*Գրասենյակային» վարպետները».* օսմանյան Ստամբուլում կայսերական խորհրդի դիմումների նախապատրաստման գործում գրչի մասնագիտության միջնորդ դերակատարումը » (“Masters of “Officialese”: The mediating role of the scribal profession in the preparation of petitions to the Imperial Council in Ottoman Istanbul”) Ռիչարդ Վիթթմանի հեղինակությամբ հոդվածում ներկայացվում են 17-րդ դարի Ստամբուլի գրագիրները, գրիչները (ʿarż-ı ḥālci) որպես անփոխարինելի միջնորդներ, որոնք ստանձնել էին վարչական և դատական փաստաթղթերը, խնդրագրերը (ʿarż-ı ḥāl) թարգմանելու և օսմանյան արքունիքում ներկայացնելու դերը: Մասնավորապես, հեղինակն անդրադառնում է վերոնշյալ մասնագետների համար ուղեցույց հանդիսացող բանալի ձեռնարկներին (inşā defterleri), որոնք հստակ կառուցվածք և մեծ տարածում ունեին Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայում:

Հաջորդ հոդվածն ունի **«Անատոլիայի թուրքախոս հույները և կարամանլիդիկա գրատպությունը» (“Turkish speaking Anatolian Rums and the Karamanlidika book production”)** վերտառությունը, որը հեղինակել է Եվանգելիա Բալթան, ներկայացնում է թուրքախոս և հունախոս ուղղափառ քրիստոնեական բնակչության լեզուն մինչև 1924թ. բնակչության փոխանակումը: 19-րդ դարի կեսերից

[5] Այս ստեղծագործությունը քննելիս Լ. Ջոհանսոնի համար հիմք է ծառայել Ավետիս Սանջյանի և Անդրեաս Տիետցեի հետևյալ ուսումնասիրությունը՝ Eremya Chelebi Kömürjian’s Armeno-turkish poem “The Jewish bride”, Budapest: Akadémiai, 1981:

հատկանշական է նաև կարամանլիդների դերը կարամանլի գրահրատարակչության գործում: Հեղինակը *կարամանլիդների* լեզվի և ազգայնականության փոխհարաբերությունների, լեզվի և պատմության ուսումնասիրության համար կարևորում է 19- 20րդ դարասկիզբն ընկած ժամանակահատվածը, երբ Կապադովկիայի թուրքախոս ուղղափառ քրիստոնյաների «հելլենականությունը» բախվեց «թուրքականությանը»: Մինչդեռ հեղինակն այս ուսումնասիրության մեջ հատկապես շեշտադրում է այս ժամանակաշրջանում կարամանլիդների աշխարհայացքի փոփոխություններն ու հետագա զարգացման ընթացքը:

Հաջորդ հեղինակը Բերնտ Բրենդեմոն է, որը **«Թոփքափը պալատի վերանայված տառադարձված տեքստերը»** (**“Transcription texts in Topkapı Sarayı revisited”**) հոդվածում քննարկում է Թոփքափը պալատի արխիվի «Օտար փաստաթղթեր» ֆոնդում պահվող թուրքերեն և գերմաներեն խառնուրդ լեզվով գրված փոքրածավալ հաշվապահական տետրակները՝ թվագրված 1650թ.: Ըստ հեղինակի առաջ քաշած վարկածների՝ դրանց հեղինակ-գրիչը ազգությամբ գերմանացի, կամ հունգարացի էր՝ կցված հաբսբուրգյան դեսպանատանը: Ընդ որում, տետրակներում վկայված եզրույթները գրված են լատինատառ թուրքերենով, իսկ վերնագրերը՝ գերմաներենով: Այս տեքստերի լեզվաբանական քննությունը հստակեցնում է 17-րդ դարի օսմաներենի ձայնավորների զարգացման միտումներն ու խոսակցական լեզվի հնչունական որոշ առանձնահատկություններ:

Լատինատառ թուրքերեն ձեռագրերի վերաբերյալ հիշարժան տեղեկություններ են հաղորդվում **« Բոսնիա և Հերցեգովինայի լատինատառ թուրքերեն ձեռագրերը (19-րդ դար)» (“Latin Script Turkish manuscripts from Bosnia and Herzegovina (19th century)”)**

հոդվածում, որի հեղինակ Էքրեմ Չաուշեվիչն անդրադառնում է Բոսնիա և Հերցեգովինայի Ֆրանցիսկան մենաստանների (Մոսթարի Ֆրանսիցկան գրադարանի, Ֆրանցիսկան վարժարանի ուսուցչաց գրադարանի և այլն) գրապահոցներում պահվող 19-րդ դարի 25 բառարանների և թուրքերենի քերականության ձեռագրերի նկարագրությանը: Հատկանշական է, որ արդեն 1866թ.-ին Բոսնիայում գործում էր առաջին տպագրատունը, սակայն բոսնիացի ֆրանցիսկաները ուսումնական նպատակներով շարունակում էին ընդօրինակել, արտագրել թուրքերեն բառարանները և քերականության գրքերը (մինչև 1878թ.-ի ավստրա-հունգարական բռնազավթումը): Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ այս ձեռագրերը կարևոր են օսմաներենի բառապաշարի, դրա բարբառային և փոխառյալ շերտերի ուսումնասիրության բնագավառներում:

Մուսա Դումանն ու Ֆաթիհ Քեմիկը **«Անդրե դու Ռուերի քերականության մեջ ոչ ներդաշնակ ձևերը» (“Non – harmonic forms in the grammar of André Du Ryer”)** հոդվածում վերլուծության են ենթարկում ֆրանսիացի արևելագետ, լեզվաբան Անդրե դու Ռուերի 1630թ. հեղինակած և լատինատառ գրված թուրքերենի տարրական քերականության դասագրքում տեղ գտած հնչյունական, բարբառային երևույթները: Այս ուսումնասիրությունը կարևորվում է նաև 17-րդ դարի թուրքերենի պատմական հնչյունաբանության ուսումնասիրման տեսակետից:

Ճանաչողական առանձնահատուկ նշանակություն ունի Ջոակիմ Էնվալի՝ **«Վերանայված վրացատառ թյուրքական տեքստերը. Նախնական նոթեր Ախալցխայի քարաբաղինի վերաբերյալ» (“Turkic Texts in Georgian script revisited: Preliminary notes on the Akhaltsikhe K’arabadini”) հոդվածը:** Հեղինակը սոցիոլեզվաբանական համատեքստում քննության է ենթարկում 18-19-րդ դարերի վրացերեն աշխարհիկ տառերով գրված

(մխեդրուլի) թյուրքական տարբեր բնույթի տեքստեր (ավետարաններ, թաթարերեն դասագիրք, ուսումնական նպատակով գրված 71 թյուրքական պոեմներ (վրացերեն՝ turkuli leksebi): Անդրադառնալով ձեռագրերի նկարագրությանն ու բովանդակությանը՝ հոդվածագիրը մանրամասնում է բժշկության հմտությունների մասին վրացերեն-հայերեն-թյուրքերեն ձեռնարկը (K'arabadini kartul-somxur-turkuli), որը բաժանված է 3 մասի. 1բ-179ա՝ վրացերեն, 179բ-219ա՝ հայերեն և 220բ-226ա՝ թյուրքերեն: Վերոնշյալ բնագրերում իրենց նշանակությամբ առանձնանում են ավետարանները, որոնք ուսումնասիրության կարևոր նյութ են 17-18-րդ դարերում այդ տարածքում կաթոլիկ միսիոներների գործունեությամբ զբաղվող մասնագետների համար: Ըստ ախլցխացի վրաց կաթոլիկ գիտնական Նատո Քրուշվիլիի՝ քրիստոնեական տառադարձված տեքստերը կարող էին օգտագործվել թյուրքախոս վրաց կաթոլիկների կողմից քարոզչական նպատակներով:

Հաջորդ հոդվածի՝ **«Թուրքերենի ածանցներում շրթնային ներդաշնակությունը 17-18-րդ դարերի չորս տառադարձված տեքստերում» (“Labial harmony in Turkish suffixes in four 17th and 18th century transcription texts”)** հեղինակ Մեմհեթ Գյումուշքըլըչը կարևոր քննություն է կատարել 17-18-րդ դարերում օսմաներենի շրթնային ներդաշնակության սկզբունքների ու արտասանական տարբերակների վերաբերյալ, որի համար նյութ են հանդիսացել այդ ժամանակաշրջանում գրված Անդրե դու Ղիերիի, Գուլիելմո Սեմանիի, Պիեռ Ֆր. Վիգուիերիի, Կոսիմո Կոմիտաս դե Կարբոգնանոյիի օսմաներենի դասագրքերը: Առանձին անդրադառնում է թուրքերենի -li, -lik, -ci բառակազմական ձևույթների, պատկանելության սեռական հոլովի, անվանական

ստորոգյալի վերջավորությունների զարգացումներին և այդ ամենն ամրագրում դասագրքերից դուրս բերված օրինակներով: Առանձին անդրադարձ է կատարվում անցյալ կատարյալ և անորոշ ժամանակաձևի կազմության ձևերին ու դրանցում առկա ներդաշնակության երևույթներին:

Հաջորդ հոդվածում՝ **«Տառադարձված տեքստ, վերագրաֆիկացում, տարբերա՞կ. մտորումներ «Կարամանլիդիկայի» վերաբերյալ» "Transcription text, regraphization, variety?- Reflections on "Karamanlidika""** Մատիաս Կապլերը ներկայացնում է *Karamanlidika* եզրույթն իբրև թուրքերենի մի տարբերակ, կամ ինչպես հանդիպում է մի շարք ուսումնասիրություններում՝ *Քարաման թուրքերեն*, *Քարամանի լեզու*: Անդրադառնալով Գեորգ Յակոբի, Օտտո Բլաուի, Ռ. Դովկինսի, Կլ. Հուարտի, Է. Ռոսսիի, Մ. Մոլլովայի աշխատություններում քարամանլիդիկայի վերաբերյալ տեսություններին, հոդվածագիրն առաջարկում է վերլուծությունների այն շարքը, որը պետք է ներառի քարամանլի տեքստերի շարահյուսական քննությունը՝ համաժամանակյա ու տարաժամանակյա կտրվածքով, բարբառային ու միջլեզվական մոտեցումներով:

Մյուս հոդվածը վերաբերում է Բերնարդո Պարիգիի **«Պարիգիի իտալերեն-թուրքերեն բառարանում բազմաձևույթային բառերը և դրանց հարաբերակցությունները թուրքական բարբառներում» ("Polymorphic words in Parigi's *Vocabolario Italiano-Tvrchesco* and their correspondences in Turkish dialects")** իտալերեն-թուրքերեն լատինատառ բառարանի քննությանը: Հոդվածագիրը՝ Յավուզ Քարթալըօղլուն քննում է ուսումնասիրության մեջ վկայված արաբապարսկական փոխառությունների շարքը՝ գրված օսմաներեն դասական ուղղագրությամբ, որոնց ուղեկցում է խոսակցական տարբերակը: Այս ուսումնասիրությունը կարծես

ամբողջացնում է 17-րդ դարում գրավոր և խոսակցական լեզվի տարբեր շերտերը: Հոդվածագիրն առանձին ներկայացնում է պոլիմորֆիզմը բառահիմքերում՝ բաղաձայնների անկումը, կրկնապատկումը բառամիջում և բառավերջում, a, ı, i, e, u, ü, ū ձայնավորների էլիզիայի երևույթները և հնչահավելումը (էպենթեզա, անապտիքսիս):

«Արտահայտություններն ու երկխոսությունները Հոլդերմանի *Grammaire turque* մեջ (1730) աշխատության մեջ» ("Idioms and dialogues in Holderman's *Grammaire turque* (1730)") վերտառությամբ հոդվածում Աստրիդ Մենզն անդրադառնում է 1730թ. Ժան-Բապտիստ Հոլեդերմանի (1694-1730թթ.) կողմից տպագրված *"Grammaire turque ou méthode courte & faciles pour apprendre la langue turque"* աշխատությանը, որն ուղղված էր ֆրանսիացի ուսանողներին Պերայի նավահանգստում դրագոման ծառայելու նպատակով թուրքերեն սովորեցնելու: Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, հինգ մասից, գլոսարիայից և կայուն արտահայտությունների և ասույթների ցուցակից: Լեզվական նյութը մատուցված է օսմաներեն, որին զուգահեռ տրվում է լատիներեն տառադարձությունը՝ հիմնված ֆրանսերեն գրային համակարգի և ֆրանսերեն թարգմանության վրա: Աստրիդ Մենզն առանձնացնում է աշխատության երկխոսությունների բաժինը, որը վերցված է առօրյա խոսքից, որն էլ արտահայտում է 18-րդ դարի օսմաներենի խոսակցական լեզվի զարգացման ընթացքը՝ չնայած որոշ բացթողումների, որոնք կապված են ֆրանսերենի՝ թուրքերենի հնչունական համակարգը ոչ ամբողջությամբ արտահայտելու հետ: Հոլեդերմանի աշխատության վերաբերյալ հոդվածագրի մանրազնին ուսումնասիրությունը մեծապես կարող է օգտակար լինել օսմանագետներին, լեզվաբաններին, որոնք

զբաղվում են 18-րդ դարի օսմաներեն խոսակցական լեզվի առանձնահատկությունների, համեմատական լեզվաբանության մեթոդների ուսումնասիրությամբ:

Հաջորդ հոդվածում, որը վերնագրված է **«Պիետրո Ֆերրագուտոյի (1611) Grammatica turchesca-յի երկխոսությունը թուրքի և քրիստոնյայի միջև. շարահյուսական առանձնահատկությունները»** (**“The Dialogue between a Turk and a Christian in the Grammatica turchesca of Pietro Ferraguto (1611). Syntactical features”**), հեղինակ Հ. Ստեյնը, ուրվագծում է միջնորդ տեքստերի հնչունաբանության, ձևաբանության վրա կրած բալկանյան բարբառների ազդեցություններն ու առանձին բաժնով անդրադառնում շարահյուսական առանձնահատկություններին: Աղբյուրը, որը նա քննության է ենթարկում այդ համատեքստում, վերաբերում է Պիետրո Ֆերրագուտոյին, որը Նեապոլի ճիզվիտ քահանա էր: Երկար տարիներ ծառայելով Թունիսում, հետագայում Նեապոլում, հեղինակը ջերմ հարաբերություններ է ստեղծում տեղի մուսուլման բանտարկյալների հետ և որոշում գրել դասագիրք՝ միսիոներական նպատակներին ծառայեցնելու համար: Թուրքերենի նրա խորը իմացությունը պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում 6 տարի տևած գերությամբ: Ֆերրագուտոյի ձեռագիր-աշխատությունը բաղկացած է 131 թերթից և ցարդ պահվում է Նեապոլի ազգային գրադարանում: Այն բաղկացած է երեք մասից՝ քերականական բաժնից, իտալերեն-թուրքերեն բառացանկից (2500 բառ) և մի նեապոլիտանցի Պիետրոյի և թուրք Մուստաֆայի երկխոսությունից՝ իտալերեն թարգմանությամբ:[6] Հոդվածագիրն քննում է այդ տեքստերում վկայված -DIK և -(y)An դերբայական վերջածանցները հեղինակի չտարբերակելու երևույթները, որոշիչ երկրորդական

[6] Աշխատության այս հատվածը հետագայում՝ 1940թ. առանձին տպագրվում է իտալացի արևելագետ Ա. Բոմբաջիի կողմից:

նախադասության նախադաս դիրքը, որը, ըստ Հ. Ստեյնի, հնդեվրոպական լեզուների ազդեցությունն է և այդ տեքստերում գագաուզերենի ազդեցության նմուշները:

Ժողովածուն եզրափակում է Ֆիքրեթ Թուրանի **«Օսմաներեն լատինատառ տեքստերում ձայնեղացման և խլացման գործընթացները օսմաներենի լատինատառ տեքստերում»** (**«Voicing and Devoicing processes in Ottoman Turkish as observed in texts in Latin script»**) հոդվածը: Հեղինակը քննության է ենթարկում լատինատառ տեքստերում արձանագրված ձայնեղ և խուլ բաղաձայնների առնմանության և խլացման երևույթներին, որոնք հետագայում ամրագրվեցին թուրքերենի հնչյունական համակարգում: Ուսումնասիրության աղբյուրներն են՝ 1680թ. Մենինսկու կողմից հրատարակված “Grammatica Turcica”-յի առաջին և չորրորդ հատորը, Թոմաս Վաուգհանի կողմից 1709թ. տպագրված թուրքերեն լեզվի քերականությունը, թուրքերենի քերականությանը նվիրված մի շարք ձեռագրեր, որոնք պահվում են Մանչեստրի և Ջոհն Ռիլանդս գրադարաններում, Հազաի կողմից ուսումնասիրության ենթարկված Հարսանիի լատինատառ տեքստը (17-րդ դար) և այլն: Համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքով քննության են առնվել օսմաներենի ձայնավորների ներդաշնակության երևույթները:

Ամփոփելով մեր խոսքը՝ մեկ անգամ ևս փաստենք, որ սույն ժողովածուն իր արժեքավոր հոդվածներով մեծ ներդրում է օսմանագիտության ասպարեզում օսմաներենի լեզվական իրողությունների խոր և համակողմանի ուսումնասիրության համար և կկամենայինք ակնկալել, որ այս կարևոր հիշարժան ժողովածուին շուտով կհաջորդեն նորերը: